

Գ. ԳՐՑՈՒՆՎԱԼԴ

ՄՈՊՐԵ


ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԵՄ ՄՂՎՈՂ
ՊԱՅՔԱՐՈՒՄ

ՊԱՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՂԻԹՑՈՒՆ
ՑԵՐԵՎԱՆ
1937

Գ. ԳՐՅՈՒՆՎԱԼԴ

9(4)2

q



ՄՈՊՐԵ


ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԵՍ ՄՂՎՈՂ
ՊԱՅՔԱՐՈՒՄ

Հայոց A 4582



ԳԵՍԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ

1937



ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ՅԵՎ ՍՊԻՏԱԿ ՏԵՇՈՐԸ

«Պատերազմը կարող է բռնկել անսպասելի կերպով...»—ասաց ընկեր Ստալինը ամերիկական մամուլի ներկայացուցիչ Ռոյ Հոուարդի հետ ունեցած զրույցում 1936 թվի մարտի 1-ին։ Նոր համաշխարհային հրդեհի, նոր իմպերիալիստական պատերազմի բռնկման վտանգը շատ մեծ է։ Իմպերիալիստները տեսդու կերպով զինվում են։ Գիշեր-ցերեկ աշխատում են ուազմական գործարանները, բորսաներում անընդհատ բարձրանում ե ուազմական ձեռնարկությունների ակցիաների դինը։

Մի շարք յերկրների կառավարությունների գլուխն են կանգնած Փաշխտները, պատերազմի բացահայտ հրձիղները։ Տևական ճղնաժամը խիստ սրել է պայքարն իմպերիալիստների բանակի ներսում։ Գերմանական Փաշիզմը ցինիկական բացահայտությամբ պատերազմի յե պատրաստվում։ Հիտլերյան Փաշիզմը Գերմանիայի ամբողջ անտեսությունն ի սպաս ե գրել իմպերիալիստական նոր պատերազմ։ Հատկապես Խորհրդային Միության դեմ ուղղված պատերազմ պատրաստելու գործին։

Կոմինտերնի 7-րդ կոնգրեսն այսպես բնորոշեց պերմանական Փաշիզմի դերը։ «Գերմանական Փաշիզմը հանդիսանում է իմպերիալիստական նոր պատե-

բազմի գլխավոր հրձիդը և հանդես ե դալիս իրեւ
միջազգային հակահեղափոխության հարվածային քը-
ռունցք։

Հիտլերյան կառավարությունն ընդհանուր դինվո-
րական ծառայություն ե մտցրել և մեծացրել ե բա-
նակի կազմը, ընդարձակել ե ողանավատորմը և տան-
կային գումարտակները։ Ֆաշիստական Գերմանիան
Լոկառնոյի պայմանագիրը վերածեց թղթի մի կտորի
և 1936 թվի մարտի 7-ին զորք մտցրեց ապառազմա-
կանացված Հռենոսյան մարզը։

Մանր թնդանոթների և գնդացրային ջոկատների
դղիրդը Հիտլերի գրաված մարզերում, ժամանակա-
կից՝ ուղղմական աերոդրոմներն ողանավերի իրենց
ստորերկրյա սրահներով, բետոնապատված պահեստ-
ներով և բենդինի պահեստագաններով— ակնհայտո-
ւեն վկայում են այն մասին, վոր Հիտլերը ձգտում
է իրադործել պատերազմի իր քաղաքականությունը,
վոր նա ազդարարել եր «Իմ պայքարը» դրքում։ Այդ
դրքում նա Գերմանիան կոչում է «տարածություն-
չունեցող ժողովուրդ»։ Վոր պետք է նվաճի նոր յեր-
կըրներ։ «Իմ պայքարը» դրքում Հիտլերը գրում ե.

«Բայց յերբ մենք ներկայումս խոսում ենք նոր
հողերի մասին Յեվրոպայում, ապա մենք կարող ենք
առաջին հերթին նկատի ունենալ միայն Ռուսաստա-
նը և նրա իշխանության տակ գտնվող ծայրերային
պետությունները։ Ճակատագիրն ինքն ե ասես մատ-
նանշում այդ ուղին»։

Գերմանական իանակը ներկայումս զգալիորեն ա-
վելի ուժեղ ե, քան 1914 թվին, համաշխարհային իմ-

աղերիալիստական պատերազմի սկզբին։ Այն ժամանակ
դերմանական բանակի թիվը հասնում էր 800.000 հո-
գու։ Ներկայումս նա առնվազն յեռապատկվել եւ հաշ
զում եւ վոչ պակաս, քան 2.900.000 հոգի ըստ գեր-
մանական ֆաշիստների պաշտոնական տվյալների։
այստեղ մտնում են պահնորդական վոստիկանության
չոկատները, ռազմականացված ֆաշիստական կադ-
մավորումները, դրոհային (CA) և պահնորդական
(CC) ջոկատները, տեխնիկական շտապ ողնությու-
նը։

Սրա վրա պետք եւ ավելացնել նաև աշխատանքու-
յին ճամբարներում ռազմական ուսուցում անց-
կենող յերիտասարդությունը (ռազմական ուսուցումն
աշխատանքային ճամբարներում հարկադրական կար-
ուով ընդդրկում եւ ամբողջ յերիտասարդությանը)։

Ֆաշիստական ռազմական տեսաբանները, դալիք
պատերազմի կոչում են «համապարփակ պատերազմ»
(`Totaler Krieg`):

Թաշխտները ձգտում են պատերազմի պատրաստ-
ման գործի մեջ քաշել ամբողջ ազգանակչությանը։
Հիտլերյան ֆաշիզմի պատերազմական պատրաստու-
թյունների հետ ձեռք-ձեռքի յե ընթանում չտեսնված
չովինիստական պրոպագանդը ազգարնակչության մեջ
ն ռասայական ուժեղ հալածանքը՝ գերմանական ժո-
ղովրդին վողեվորելու և ռազմական նոր հաշով հա-
մակելու նպատակով։

Յերկրում տարածվող աշխարհագրական քարտեղ-
ները պատկերացնում են մեծացած Գերմանիան (grös-
seres Deutschland): Նրա մեջ մտցվում են
Ավստրիան, Զիգերիան, Զեխոսլովակիայի մի մասը,

Աւհական Սիլեղիան, Դանցինդը, Հոլանդիան, Դանիան,
Շվեդիան, Ելզաս-Լոթարինդիան, Եյպեն-Մալմեդին:

Գերմանական Փաշիզմը սպառնում է վոքր յեր-
իւրների և ժողովուրդների անկախությանը:

Գերմանական Փաշիստական դործակալները տես-
դու կերպով աշխատում են Գերմանիայի սահմանա-
կից յերկրներում և Բալկաններում, ստեղծելով Փա-
շիստական միություններ, վորոնք համակրում են
այդ յերկրների միացմանը Հիտլերյան Գերմանիա-
յին:

Պայքարը նոր դադութների համար, աշխարհի նոր
վերաբաժանման համար, պայքարը Խորհրդային
Միության դեմ հանդիսանում է հիտլերյան Փաշիզմի
ոլխափոր նալատակը:

«Գերմանական Փաշիստների ավանտյուրիստական
ողանները չափազանց հեռու յեն տարածվում և ուազ-
մական ռեանչ նկատի ունեն, ֆրանսիայի դեմ, նրանք
նկատի ունեն Զեխոսլովակիայի բաժանումը: Ավստ-
րիայի աննեքսիան, Մերձբալթյան յերկրների ինքնու-
րույնության վոչնչացումը, յերկրների, վորը նրանք
ծգտում են պլացդարմ դարձնել Խորհրդային Միու-
թյան վրա հարձակվելու, Խորհրդային Ռւկաինայի
անջատումը ԽՍՀՄ-ից: Նոանք իրենց համար դա-
սութներ են պահանջում, ձգտելով տրամադրություն-
ներ բորբոքել հողուտ համաշխարհային պատերազմի՝
ոշխարհի նոր վերաբաժանման համար»*): Այսպես ե-

* Կոմինտերնի VII կոնդրեսի «բանաձևերը» Կուսիրատ
1935 թ. եջ 26, 27:

բնորոշում կոմինտերնի 7-ըդ կոնդրեսը հիտլերյան
կառավարության ռազմական նազատակները:

Պատերազմական վտանգի մյուս ոջախը դտնվում
և Հեռավոր Արևելքում: Ճապոնական զինվորականու-
թյունը տենդու կերպով զինվում է: Գրեթե ամեն
որ մամուլում հաղորդագրություններ են յերեսում
այն մասին, վոր ճապոն-մանջուրական ջոկատները
հարձակվում են Մոնղոլական ժողովրդական հանրա-
պետության և մեր սոցիալիստական հայրենիքի տե-
րիտորիայի վրա: Ճապոնական զորքերն ավելի ու ա-
վելի խորն են թափանցում Զինաստան: Մանջուրիայէ
աննեցսիային հետեւց հյուսիսային-չինական մար-
դերի գրավումը: Ճապոնական իմպերիալիզմը կա-
ռուցել է դեպի խորհրդային սահմանները տանող
ստրատեգիական նոր ճանապարհներ: Վերջին դու-
մարման ճապոնական պարլամենտը 48 միլիոն իւն*)
հատկացրեց ողանավատորմի վերակազմության հա-
մար: Զիֆույում, կորեայում և Ֆուբմողա կղզում նոր
բարձաներ են ստեղծված ողանավատորմի համար:

Իտալական ֆաշիստներն արյունահեղ, բնաջնջող
պատերազմ մղեցին հարեշական ժողովրդի դեմ: Ան-
պաշտպան քաղաքներն ոմբակոծվեցին և հողին հա-
վասարվեցին: Հարեշտանի խորը թիկունքը թափան-
ցած հզոր ոմբակիրները վիթխարի տարածություններ
թունավորեցին թունավոր գաղերով և բազմաթիվ հրբ-
դեհներ առաջացրին դյուղերում և հիվանդանոցնե-
րում:

*) 1 յենը մոտ 1ռ. 50 կ. եւ

Իմպերիալիստներն ուժեղացնում են ուղմամթերքի արտադրությանը, ստրատեգիական նոր ճանապարհներ են կառուցում, ողանավատորմերի համար բազաներ են ստեղծում և այլն:

Իմպերիալիստական յերկրներում թիկունքի պատրաստություն ե կատարվում միաժամանակ: Հուսալի թիկունքը յուրաքանչյուր պատերազմում հանդիսանում ե պատերազմող պետության գլխավոր հենարանը: Առաջվա պատերազմներում ել բոլոր միջոցները ձեռք եյին առնվում պարենի և ուղմամթերքի անխափան մատակարարումով բանակն ապահովող հուսալի թիկունք ստեղծելու համար: Առանց այդպիսի հուսալի թիկունքի՝ պատերազմ վարել անհնար ե:

Հատուկ նշանակություն ե ստանում ազգաբնակչության իդեոլոգիական մշակումը, ուղմական սրուպագանդը, ազգաբնակչության մեջ չովինիստական զգացմունքները հրահրելը, սպիտակ տեռորի ողնությամբ բանվոր դասակարգին սանձահարելը:

Կուսակցության 17-րդ համագումարում ընկեր Ստալինն ասաց. «Շովինիզմը և պատերազմի պատրաստումը, վորակս արտաքին քաղաքականության հիմնական տարրեր, բանվոր դասակարգի սանձահարումը և տեռորը ներքին քաղաքականության բնադավառում, վորակս անհրաժեշտ միջոց ապադա ուղմանակաների ամրացման համար,— ահա թե ի՞նչն է առանձնապես զբաղեցնում այժմ ժամանակակից իմպերիալիստական քաղաքակետներին»*) :

*) Ընկեր Ստալինի հաշվետու զեկուցումը համԿ(Բ)Կ XVII համագումարում: Սղագրական հաջիետվություն, Կուսիրատ, 1934թ. եջ 11.

Անողորմ սպիտակ տեռորի ոգնությամբ իմպե-
րիալիստները ձգտում են դեռ «խաղաղ ժամանակ»
ջախջախել և բնաջնջել այն բոլոր ուժերը, վորոնք
դեմ են դուրս դալիս պատերազմին։ Ահա թե ինչո՞ւ
սպիտակ տեռորն առանձին կատաղությամբ հարձակ-
վում ե իմպերիալիստական պատերազմի ամենահե-
տեվողական հակառակորդների՝ կոմունիստական կու-
սակցությունների վրա։ Ահա թե ինչո՞ւ իմպերիալիս-
տական բուրժուազիան ձգտում է տեռորի ոգնու-
թյամբ ջախջախել բոլոր բանվորական կազմակերպու-
թյուններին և վոչնչացնել պլուտոսարիատի առաջնորդ-
ներին։ Ահա թե ինչո՞ւ նոր պատերազմի ամենաակտիվ
պատրաստման եղոխայում «... Փաշիզմը դարձել և
ներկայումս ամենամոդայական ազրանքը բուրժուա-
կան մարտնչող քաղաքագետների մեջ» (Ստալին)*) :

Փատերը վկայում են այն մասին, վոր սպիտակ
տեռորն առավելագույն ուժգնությամբ մոլեգնում և
վողջ աշխատավոր ազգաբնակչության դեմ հենց այն
յերկրներում, վորոնք պատերազմի հրձիկներն են, —
Գերմանիայում, Ճապոնիայում և նրա գաղութնե-
րում, Փաշիստական Իտալիայում, վորն իր տիրապե-
տությունն ե հաստատել Հարեւատանում հարեւական
ժողովրդի դեմ արյունոտ, գիշատիչ պատերազմ մղե-
լու ճանապարհով։

Սպիտակ տեռորը պատերազմի նամապարի և մաք-
րում և հանդիսանում է իմպերիալիստական պատե-
րազմի պատրաստման յեղանակներից, միջոցներից
մեկը։

*) Նույն տեղում։

ՍՊԻՏԱԿ ՏԵՌՈՐԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ Ե

Յաշխտական Գերմանիայում սպիտակ տեռորը պատերազմի ինտենսիվ պատրաստության առնչությամբ ավելի ու ավելի սանձարձակ և անողոք ձեւեր ե ստանում։ Զինվորական ծառայություն մտցնելու ժամանակից նորանոր տասնյակ հաղարավոր հեղափոխական բանվորներ, դյուղացիներ, ինտելիգենցիայի և միջին խավերի ներկայացուցիչներ Փաշխտների կողմից յենթարկվում են փորձությունների և ծեծի, նրանցից շատերը տարվում ու նետվում են տաժանակիր աշխատանքի և համակենտրոնացման ճամբարները, շատերը գաղանարար սպանվում են։

Գերմանական ռայխսվերն ապառազմականացված մարզերը մտնելուց առաջ ձերբակալվեցին հաղարավոր բանվորներ հակաֆաշիզմի կասկածով (հատկապես պաշտպանության դժով աշխատողներից)։ Հիշեցնենք 628-ի մասսայական դատավարությունը Վուպերտալում։ Մեղադրյալների մեծ մասը վերցված եր պաշտպանության դժով աշխատող ձեռնարկություններում՝ քիմիական, մետաղածուլման և արհեստական մետաքսի ձեռնարկություններում աշխատողներից։ Դեռևս նախաքննության ժամանակ 11 հակաֆաշիստ մեղադրյալներ սպանվեցին. դրանք եյին՝ Գլոբախտը, Երիխոսը, Կրամերը, Կրեմերը, Կրեյնկենբառումը, Մեր-

տինը, Մուտը, Պիկարը, Շեֆֆելսը. Շտեյնը և Վա-
տերմանը: Այդ դատավարությունը՝ այդ դատաստա-
նը ույիսավերի զորքերն ապառաղմականացված մարդը
մտցնելու նախապատրաստումն ելին:

Արհեստակցականորեն կազմակերպված 628 բան-
փորների Վաւալպերտալյան մասսայական դատավարու-
թյան իմաստը ամբողջ Փաշխտական Գերմանիայում
կատարված բազմաթիվ մասսայական ձերբակալու-
թյունների նշանակությունը բաց և արված գերմանա-
կան Փաշխտական «Անդրիֆ» թերթի 1936 թ. մարտի
8-ի առաջնորդող հոդվածում: Այդ հոդվածում ի մի-
ջի այլոց ասված ե.

«Մի՞թե մենք, վորապես միամիտ յերազողներ,
անպաշտպան կթողնենք մեր քիմիական գործարաննե-
րը լեվեռկուղենում, Գեխոտում, Ելբերֆելդում,
(Վուլպերտալ), պայթուցիկ նյութերի մեր նոր, ժա-
մանակակից գործարանները,— այս ամենը, վոր կեն-
սականորեն անհքաժեշտ, անփոխարինելի յե վոչ մի-
այն մեր զորքերի, այլև մեր անվտանգության հա-
մար»:

Փաշխտական մամուլը պարզ կերպով ցույց ե
տվել, վոր մասսայական դատավարություններն ու
մասսայական ձերբակալությունները ծառայում են
ուղղմական արտադրությունն «ապահովելու» համար,
կոչված են վորապես «պաշտպանություն» ծառայել Փա-
շխտական Գերմանիայի պատերազմական ուժեղ պատ-
րաստությունների համար: Դրանումն ե նրանց նպա-
տակը: Այդ նույն նպատակի համար ե ստեղծված նաև

Համակենտրոնացման ճամբարների ցանցը, վոր ձգվում է Գերմանիայում արևելքից արևմուտք և հյուսիսից հարավ, վորն ապահովում է թիկունքի «անհուսալի» տարրերի մեկուսացումը:

Վերջին շաբաթներս ամբողջ Գերմանիայում տեղի ունեցան նոր մասսայական ձերբակալություններ: Կազմակերպված են նոր մասսայական դատավարություններ բազմաթիվ ձեռնարկությունների բանվորների և ծառայողների ամբողջ կազմի դեմ Համբուրգում, Շտուտգարդում, Յեյտցում և Գերմանիայի ուրիշ քաղաքներում, նրանց մեղադրելով հակաֆաշիզմի մեջ: Այդպիսի դատավարությունների ճանապարհով հիտլերյան ռազմական քաղաքականությունն աշխատում է ձեռնարկություններից մաքրել և արժմատախիլ անել բոլոր նրանց, ովքեր ձգտում են խաղաղության պահպանմանը:

Դասակարգային պայքարին մասնակցելը Գերմանիայում դիտվում է վորպես պետական դավաճանություն և հաճախ պատժվում ։ մահապատժով: Բանվորների ամբողջ խմբեր Եսսենում յեղած կրուպի գործարաններից բռնված են «լրտեսության» կասկածով: Վոչ վոք չդիտե, թե նրանք ուր անհետացան: Հարազատներին արդելում են տեղեկանալ, թե վորտե՞ղ են գտնվում նրանց ամուսիններն ու վորդիները:

Այս բոլոր փաստերը դալիս են ասելու, վոր ինչ քան ավելի յե գերմանական Փաշիզմը մոտենում իր նպատակին— նոր պատերազմին, այնքան ավելի անողոք և դառնում տեսուրը, վոր նա թափում է գերմանական բանվոր դասակարգի գլուխին:

Ճապոնական իմպերիալիզմն ուժեղացրել ե հալածանքը «Վտանգավոր մտքերի» դեմ։ Որենքի հիման վրա կատաղարած հալածում են վոչ միայն կոմունիստներին, այլև բոլոր նրանց, ովքեր դեմ են տրամադրված դիշատիչ պատերազմին։ «Վտանգավոր մտքերի» դեմ ուղղված որենքի առաջին պարագրաֆը մահապատիժ կամ ցմահ տաժանակիր աշխատանք ե նախատեսում այնպիսի կազմակերպության պատկանելու համար, վորը ցանկանում է դավաճանել ազգային քաղաքականությանը։ Զինվորական որենսությին 36-րդ պարագրաֆը մահապատիժ ե նախատեսում բանակում հակապատերազմական պրոպագանիդ մղելու համար։

«Վտանգավոր մտքերի» վերաբերյալ որենքի հիման վրա Ճապոնիայում ամեն որ ձերբակալվում են 500 հոգի։ Բայ պաշտոնական տվյալների, ճապոնական բանտերում 1935 թվի մարտի 15-ին հաշվվում եր «Վտանգավոր մտքերի» կասկածով ձերբակալված 23—24 հազար աշխատավոր։ Բանակում զինվորների ամենափոքր յելույթը պատերազմի դեմ անխնա ճընշվում ե սպաների կողմից տեռորի, բռնավարժության և մահակի կարգապահության ողնությամբ։

Խիստ հսկողություն ե ճաստաված ճապոնական զինվորների՝ ազգաբնակչության հետ ունեցած հարաբերությունների վրա։ Զինվորների նամակագրությունը հարաղատների հետ գտնվում ե վերահսկողության տակ։ Հարազատների այցելության ժամանակ զրոյցը թույլ ե տրվում միայն սպաների ներկայությամբ։

Ուազմական գործարաններում շարունակ բանվոր-ների ձերբակալություններ են կատարվում հակապա-տերազմական պրոպագանդի համար։ Բանվորների գործադրության պայքարն անդթողեն ճնշում են վոստիկանական ջոկատների և Փաշիստական բանդա-ների ողնությամբ։

Սպիտակ տեռորն ե'լ ավելի անողոք և սանձար-ձակ կերպով ե մոլեգնում ճապոնական գաղութներում և գրավված մարզերում— Ֆրմողա կղզում, Կորեա-յում, Հարավային ծովի կղզիներում, Կվանտունյան թերակղզում և հատկապես Մանջուրիայում և Հյուսի-սային Չինաստանում։ Այստեղ ուազմա-Փաշիստական ծապոնիայի պատերազմական պատրաստության ան-քաժան մասն են կազմում մասսայական ձերբակա-լությունները, պատժիչ արշավախմբերը, ամբողջ գյուղերի և մարզերի ավերումը։

Ճապոնական իշխանությունները Մանջուրիայի աղդաբնակչությանն ամենասոսկալի փորձությունների յեն յենթարկում, վորպեսզի ճնշեն ճապոնական զին-վորականության հաստատած ռեժիմին ցույց տրվող ամեն մի դիմադրություն։ Ձերբակալվածներին կախ են տալիս մատներից ու վոտքերից և ծեծում են մըտ-րակներով, աղղոքերի միջև յերկաթյա զնդակներ են խրում, միզանցքի մեջ խողի մազ են մտցնում, պղպե-ղաջուր են լցնում քիթը, դանդաղ այրում են խարույ-կի վրա մինչև մահանալը։ Մասսայական տանջալի մահապատիժներն ամենորյա յերևույթ են հանդիսա-նում Մանջուրիայում և Հյուսիսային Չինաստանի

մարդերում, վորոնք ոկուսպացիայի յեն յենթարկված
ճապոնական զորքերի կողմից :



Խորհրդային Միությանը սահմանակից պետու-
թյուններում սպիտակ տեռորն առանձնապես անողոք
է, վորովհետև պատեղազմի Փաշտական հրձիգներն
առանձնապես աշխատում են «անվտանգ» դարձնել այդ
մարդերը և այնտեղ ջախջախել ազգաբնակչության
ամեն մի դիմադրութունը ռազմական պլաններին:

Վերցնենք, որինակ, Լեհաստանը: Վարչավայում
և Լվովում աշխատավորների վրա բացված կրակոց-
ները ցույց տվին ամբողջ աշխարհին ռազմական տե-
ռորը, վորն որեց-որ ուժեղանում և Լեհաստանում:
Խորհրդային Միությանը սահմանակից լեհական մար-
դերում, Արևմտյան Բելոռոդուսիայում և Արևմտյան
Ռւկայինայում, փաստորեն պաշարողական դրու-
թյուն և տիրում: Պատժիչ արշավախմբերը տեղական
ազգաբնակչության դեմ, գնդակահարությունների,
բռնությունների, փորձությունների ուղեկցությամբ,
համատարած յերեսույթ են դարձել: Այսպես կոչված
«ծայրերկրների» (Արևմտյան Բելոռոդուսիայի և Արև-
մտյան Ռւկայինայի) բնակիչները, բանտարկու-
թյան ժամկետը լրացնելուց հետո, արտաքսվում են
հայրենի մարդից. նրանց ուղարկում են մեծ մա-
սամբ Լեհաստանի արևմտյան սահմանադլուխը (Պո-
մերանիա, Պողնան): Արտաքսվածներն իրավունք չու-
նեն ուրիշ տեղ ապրելու: Նրանք իրավունք չունեն

թողնել իրենց բնակավայրը նույնիսկ աշխատանք փնտռելու համար։ Արտաքսվածների գլխավոր մասսան կազմում են բելոռուս և ռւկրայինացի դյուդացիները ԽՍՀՄ-ին սահմանակից մարդերից։

Այսպես, Գ. դյուդացին, մեկ հեկտար հողի «սեփականատեր», քաղաքական գործունեյության համար չորս և կես տարի բանտ նստեց հայրենի դյուդից հեռու, լեհաստանի մյուս ծայրում։ Տուն վերադառնալով, նա հրաման ստացավ արտաքսվելու մասին։ Անդությ հրամանը կատարելուց հրաժարվելու համար նա նորից ձերբակալվեց իր 14 և 16 տարեկան վորդիների հետ միասին։ Գյուղացուն աքսորավայրը ուղարկեցին, ուր նա, աշխատանք չունենալով, տառացիորեն սովամահ է լինում։ Սա մեկն է միայն շատ գեղքերից։ Այսպիսի ճանապարհով լեհական ֆաշիզմը հույս ունի իր ծայրերկրները դարձնել «հուսալի թիկունք» և «պատերազմի պիտանի»։



Արեւլյան ԱՓրիկայում ծագած պատերազմի առնչությամբ Փաշխտական տեսորն իտալիայում անհավատալիորեն սրվեց։ Ամբողջ իտալական ժողովուրդը տառապում է իտալո-հարեցական պատերազմից։ Զինվորական և արտակարդ դատարանները մոլեգնում են պատերազմի հակառակորդների դեմ։

Զեռնարկություններն իտալիայում ուղմականացված են։ Այն զինվորներին, վորոնք հրաժարվում ենին ճակատ գնալ, գնդակահարում ենին։ Ազգային

վոքրամասնությունների շրջաններում, առանձնապես
Վենետիկ-Զուլիա նահանգում և Տիրոլում, արտա-
կարգ դրություն և մտցված:

Հաճախ ծաղող անկարգություններն ու աշխա-
տավորների յելույթները պատերազմի դեմ անողոք
կերպով ճնշվում են:

1936 թվի փետրվարի 2-ին անկարգություններ
ծաղեցին խոալական «Կոնտե Վերդե» շոգենավի վրա,
վորը 3000 զինվոր եր փոխադրում պատերազմական
գործողությունների արևելյան-աֆրիկյան ճակատը.
Էնդ վորում 40 զինվոր գնդակահարվեցին սպաների
ձեռքով, նրանց դիակները ծով նետվեցին:

12 խոալացի զինվոր ճակատում, հրաժարվելով
տանկի վրա նստել, գնդակահարվեցին: Տրիեստում
ուսանող Վիտչիչն ու բժիշկ Կաստելիչը ձերբակալվե-
ցին և սպանիչ կլիմա ունեցող կզզիներն աքսորվեցին
«արտասահման մեկնելու դիտավորության» համար:
Տասնյոթ տարեկան ուսանող՝ Բիշչիչիցի Վիցիկը 5
տարվա աքսորի դատապարտվեց ոլովենական յերդ
յերդելու համար:

Բավենադոյի յերկու զինվոր, ցանկանալով հրա-
ժեշտ տալ իրենց ընտանիքներին Հարեշստան մեկնե-
լուց առաջ և դրան թույլտվություն չունենալով,
ձերբակալվեցին: Սպանեցը նրանց այն աստիճան ծե-
ծեցին, վոր հարկ յեղափ նրանց հիվանդանոց ուղար-
կել:

Միլանում տրամվայի հիսնամյա մի վերահսկիչ
ձերբակալվեց այն բանի համար, վոր ասել եր, թե
«պատերազմը յերկար և ծանր կլինի»: Հոռմում բան-

վոր Տարիցերը գնդակահարվեց դործարանների ռազմականացման վերաբերյալ որենքի հիման վրա «չենթարկվելու համար» :

Պաղուայում Տրոյլո անունով մի աղջիկ Փաշխտական մի մեծ տոնի առթիվ իր փեսացույին հետեւյալն եր գրել. «Ավելի լավ և վաղը գնանք քաղաքից դուրս դրսնելու, քան թե մնանք քաղաքում և դիմակահանդեսը գիտենք» : Մի քանի որից հետո նրա ամբողջ լնտանիքը ձերբակալվեց : Վերջի վերջու աղջկանողներն ազատ արձակվեցին, բայց նա ինքը կղզին աքսորվեց :

Տուրինում ինտելիգենցիայի 20 հայտնի ներկայացուցիչներ ձերբակալվեցին հակապատերազմական պրոպագանդի կասկածով :

Լիմոսնոյուժի մեկ անդամից ձերբակալվեցին 132 հոգի . նրանց մեղադրում եյին այն բանում, վոր մասնակցել են քաղաքական կալանավորների ողտին կատարված հանգանակությանը :

Այսպիսի որինակներ, վորոնք վկայում են իտալիայում ամբողջ աշխատավոր ժողովրդի դեմ մոլեզնող ռազմական տեսողի ուժգնության մասին, կարելի յեւ հաղարներով բերել :



Մենք միայն մի քանի որինակներ բերեցինք մի քանի յերկրից : Այս որինակները ցայտուն կերպով ցույց են տալիս, թե ինչպես պատերազմի պատ-

քաստման առնչությամբ ուժեղանում և սպիտակ տե-
ռորը, ինչպես սպիտակ տեռորը պատերազմի հրձիդ-
ների համար դառնում և պատերազմի դեմ ապստամ-
բող մասսաներին ճնշելու գլխավոր միջոցներից մե-
կը, այն գլխավոր միջոցներից մեկը, վորոնք կոչված
են բուրժուազիայի աչքին ասլահովել թիկունքը պա-
տերազմ պատրաստելու և ապագա պատերազմական
գործողությունների համար։ Սպիտակ տեռորը տե-
ղում և վոչ միայն հեղափոխականների գլխին, այլև
հանդես է դալլս ընդդեմ աշխատավորների լայն մաս-
սաների, ընդդեմ բանվորների և դյուղացիների։ Վեր-
ջին ժամանակներս հայտնի դարձած փաստերը հաս-
տառում են այն դիրքավորման ճշտությունը, վոր ըն-
դունեց Միջազգային կարմիր ողնության 1-ին համաշ-
խարհային կոնքբեսը 1932 թ. նոյեմբերին պատերազ-
մի և սպիտակ տեռորի միջև յեղած սերտ կապի մա-
սին։

«Աշխարհի սկսված նոր վերաբաժանման և իմ-
պերիալիստների կողմից հակախորհրդային ինտեր-
վենցիայի տենդուտ պատրաստման պայմաններում ըս-
տիտակ տեռորը դառնում և իմպերիալիստական պա-
տերազմի դեմ և Խորհրդային Միության պաշտպա-
նությամբ հանդես յեկող հեղափոխական աշխատավո-
րական մասսաների հետ դատաստան տեսնելու կարե-
գորագույն միջոցներից մեկը»։

ՄԻԶԱՋԳԱՅԻՆ ԿԱՐՄԻՐ ՈԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏԵՐԱԶ- ՄԻ ԴԵՄ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐՈՒՄ

Սպիտակ տեռորի փաստերն ու թվերը խոսում են
այերձախոս լեզվով։ Նրանք աղղանշում են նոր սպան-
դի վիթխարի վտանգը։ Նրանք վկայում են այն մա-
սին, վոր պատերազմի հրձիգները փորձում են հրեշտ-
յին միջոցներով ջախջախել ժողովրդական լայն մաս-
սաների աճող դիմադրությունը պատերազմի հան-
գեղ, փորձում են ջախջախել պատերազմական պատ-
րաստությունների և պատերազմական պրովոկացիա-
ների դեմ ուղղված պայքարի ամրապնդվող միասնա-
կան ճակատը։

Դրա համար ել պայքարը սպիտակ տեռորի դեմ,
հալածվող հակաֆաշխտների և պատերազմի գեճ-
մարտնչողների պաշտպանությունն սպառնացող իմպե-
րիալիստական պատերազմի դեմ մղվող պայքարի մի-
մասն են հանդիսանում։

Միջազգային կարմիր ողնությունը գնալով ավելի
ու ավելի յէ վերաճում բոլոր քաղաքական ուղղու-
թյունների աշխատավորների մասսային ընդդրկու-
կազմակերպության։ Կարմիր ողնությունը բոլոր պշ-
խարհամասերում իր ունեցած 72 սեկցիաներով դար-
ձել ե պատերազմի դեմ ուղղված համաշխարհայի-
շարժման հզոր մի գործոն։ Նրա ամբողջ գործունե-
յությունը սերտորեն շաղկապված ե պատերազմի դե-

մղվող պայքարի հետ, քանի վոր նա պայքարում ե
պատերազմի ճանապարհը հարթող սպիտակ տեռորի
գեմ, նա ողնում և սպիտակ տեռորի զոհերին— հա-
կասպատերազմական պայքարի զոհերին։ Կարմիր ող-
նության առաջին համաշխարհային կոնդրեսն իր բո-
լոր սեկցիաների առջև դրեց պատերազմի դեմ պայ-
քարելու խնդիրը։ Այդ կոնդրեսում միջազգային գրու-
թյան և Միջազգային կարմիր ողնության խնդիրների
մասին իր տված զեկուցման մեջ ընկ . Անդրե Մարտին
ասաց հետեւյալը .

«Մի՞թե մեր կարմիր ողնությունը պատերազմի
դեմ պայքարի պիտի մղի «Մենք դեմ ենք պատերազ-
մին» լողունդը մեխանիկորեն կրկնելու ճանապար-
հով, մեխանիկորեն կրկնելով այն, ինչ մյուս կազ-
մակերպություններն են ասում։ Վո՞չ։ Մենք այդ
պայքարը կմղենք նախ և առաջ պատերազմի դեմ պայ-
քարելու համար հալածվող հեղափոխականներին պաշտ
պանելու ճանապարհով, նրանց իրոք պաշտպանելու
ճանապարհով, այսինքն նրանց հալածանքի իսկական
պատճառները մասսայականացնելու ողնությամբ, ինչ-
պես նաև հողատար և լուրջ աջակցություն ցույց տա-
լով այն զինվորներին և նավազներին, վորոնք պա-
տրժվում են իմակերիալիստական պատերազմի դիմ
յելույթ ունենալու համար։» :

Միջազգային կարմիր ողնության առաջին համաշ-
խարհային կոնդրեսն իր բոլոր սեկցիաներին խնդիր ա-
ռաջադրեց՝ «լայնորեն ծավալել ադիտացիան և պատե-
րազմի դեմ մղվող պայքարում տուժած բոլոր հեղա-
փոխականների պաշտպանության հատուկ կամպա-

նիան, ողնություն կազմակերպել այն զինվորների և
նավազների նկատմամբ, վորոնք հալածանքների յև
յենթարկվում հակամիլիտարիստական աշխատանքեր
համար, մասսայական յեռանդուն պայքար մղել ուղղ-
մաղաշտային դատաքանների, զինվորական ատյան-
ների և հատուկ որենքների դեմ, վորոնք լրտեսության
դեմ պայքարելու պատրիակով ուղղված են հեղափո-
խական և հակամագերիալիտական ագիտացիայի
դեմ»:

Կատարելով այս վորոշումը, Միջազգային կարմիր
ոգնության սեկցիաները վիթխարի աշխատանք կատա-
րեցին, վորը հնարավորություն տվեց մահից աղատել
հարյուրավոր և հազարավոր հալածվող հակապատե-
րազմական մարտիկների:

ԿԱՐՄԻՐ ՈԳՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՃԱԿԱՏՆ ԸՆԴԴԵՄ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՈՒ ՖԱՇԻԶՄԻ

Արդեն իսկ իր առաջացման շրջանում Միջազգա-
յին կարմիր ոգնությունը միջազգային լայն կամպա-
նիաներ ծավալեց, վորոնք իրադործում եյին ակտիվ
ուայքարն ընդդեմ կմագերիալիտական պատերազմի
պատրաստման: Այդպես եր 1923 թվին Գերմանիա-
յում, յերբ դաշնակիցները գրավեցին Ռուբի մարզը:
Գերմանական պրոլետարիատը գտնվում եր հեղափո-
խական զարթոնքի վիճակում: Կարմիր ոգնությունն

այն ժամանակ դերմանական հեղափոխականների հետ
յեղբայրանալու համար զինվորական դատարանի ա-
ռաջ կանգնեցված Փրանսիացի զինվորների պաշտպա-
նության լայն կամպանիա կազմակերպեց : Հետադա-
յում այդպիսի կամպանիաներ ծավալվեցին Մաքոկ-
կոյի և Սիրիայի գաղութային պատերազմների ժամա-
նակ, Կենտրոնական Ամերիկայում ծաղած պատե-
րազմների ժամանակ, Զինաստանում իմալերիալիստ-
ների կատարած ինտերվենցիայի ժամանակ : Կարմիր
ողնությունը կազմակերպեց 1916 թվականի վեր բան-
տում հյուծվող հակապատերազմական մարտիկ թուժա-
վունիի ազատման կամպանիան և ուրիշ շատ յելույթ-
ներ :

Միջազգային կարմիր ողնության սեկցիաներն ազ-
գային և միջազգային մասշտաբով բազմաթիվ կամ-
պանիաներ անցկացրին, աջակցելով այն զինվորներին
և նավազներին, վորոնք հալածվում եյին հեղափոխա-
կան աշխատանքի ու պրովադանդի համար զորանոց-
ներում ու նավերում, կամ իմալերիալիստական բա-
նակներում ու ռազմանավերում բռնկված ազստամ-
րությունից հետո . այդ կամպանիաներն ողնուցին նր-
անցից շատերին ազատելու բանտից կամ փրկելու
մահապատճից :

Կարմիր ողնության սեկցիաները վաղուց ի վեր
յեռանդուն պայքար են մղում չովինիզմի և ռասայա-
կան տեղելության դեմ : Հիշեցնենք տարիներ տեսլ
կամպանիան լինչի դատաստանի դեմ և Սկոտաբորոյի
պատանիների փրկության համար :

Պայքարը տեսողի, լինչի դատաստանի դեմ և Սկո-
տաբորոյի պատանիներին ելեկտրական աթոռից ա-

զատելու համար համակեց ամբողջ աշխարհի աշխատավորներին : Անդլիայում , Հոլանդիայում և Ֆրանսիայում կազմվեցին Սկոտսըրորոյի պատանիների պաշտպանության կոմիտեներ զանազան կազմակերպությունների և հայտնի գործիչների մասնակցությամբ :

Պատանիներից մեկի մայրը՝ Աղա Ռայտը մեկնաց Յելլովա . նա հանդես յեկավ մասսայական ժողովներում Սկոտսըրորոյի պատանիների պաշտպանությամբ , վորոնք գտնվում եյին մահապատճի սպառնալիքի տակ . նա խոսեց մամուլի ներկայացուցիչների հետ :

Կապիտալիստական յերկրներում , ուր աղջային փոքրամասնություններն առանձնապես ստրկացված են և յենթարկվում են հատուկ հալածանքների , ուր պատերազմի պատրաստման շահերից յենելով բուրժուազիան փորձեր և անում ռասայական ու աղջային թշնամանքը հրահրել և ժողովուրդներին իրար դժմ վրդուել ,— այդ յերկրներում կարմիր ողնության սեկցիաներն ողնության յեկան ստրկացված աղջային փոքրամասնություններին ու ժողովուրդներին , աջակցություն ցույց տալով դոհերին և մերկացնելով աղջային հալածանքի հակահեղափոխական բնույթը : Կարմիր ողնության աշխատողներն աշխատավորական մասսաներին ցույց տվին , վոր ռասայական ատելությունն ու աղջային փոքրամասնությունների հետապնդումը պատկանում են պատերազմի պատրաստման միջոցների թվին և կոչված են ծառայել սեփական շահերի պաշտպանությունից մասսաներին կտրելու

Համար : Կարմիր ոգնության աշխատողները աշխատա-
վորական մասսաներին ցույց եցին տալիս , վոր ռասա-
յական հալածանքն ու աղդային փոքրամասնություննե-
րի հետապնդումները բուրժուազիայի դիտավորու-
թյամբ պետք է չովիճնիստական տրամադրություններ
յերեւան հանեն առդարձնակչության մեջ , տրամադրու-
թյուն առաջացնեն իմակերիալիստական ռազմական
նպատակների ոգտին :

Կարմիր ոգնության բոլոր միջազգային և աղդա-
յին կամպանիաները ծառայում են լայն մասսաներին
դաստիարակելու պրոլետարական լնտերնացիոնալիդ-
մի և ժողովուրդների միջազգային համերաշխության
վորով : Այսպիսով , նրանք բոլորը հակապատերազմա-
կան պայքարի մի մասն են հանդիսանում :

Վերցնենք , որինակ , ընկ . ընկ . Երնստ Թելմանի ,
Ռակոշիի , Մերենդորֆի և Ռուեցկու վրեկության կամ-
պանիաները : Այդ կամպանիաները վերածվեցին այն-
պիսի յելույթների , վորոնք ընդդրկում եյին վոչ մի-
այն կարմիր ոգնության կազմակերպություններին և
կոմունիստական կուսակցություններին , այլև բոլոր
յերկրների ու աշխարհամասերի բոլոր հակաֆաշիստ-
ներին : Ընկ . Երնստ Թելմանի ազատման , ընկ . Ռա-
կոշիի ազատման համար մղվող պայքարի դրոշի տակ
միանում են խաղաղության և ազատության բոլոր քա-
րեկամները : Հանգուցյալ մեծ գրող Անրի Բարբյուսը ,
վորը ժողովուրդների սպանդի ժամանակ գրեց իր հա-
կապատերազմական մեծ գիրքը՝ «Կրակում» , հայտա-
րարել եր .

«Պայքարը թելմանի համար— պայքար և Փաշիզմի-
և պատերազմի գեմ»:

Կոմինտերնը գործկոմի նախադահության անդամ-
ֆրից Հեկիերտի մահից առաջ արտասանած խոսքերը
հետեւալներն եյին .

«Պայքարը խաղաղության համար— պայքար և
Երնստ թելմանի աղատության համար»:

Այդ պայքարն ամենատարբեր ձևերն և ընդու-
նում: Այդ ձևերից մեկն ե հանդիսանում կարմիր
ողնության կողմից հակապատերազմական յելույթ-
ների կազմակերպումը դերմանական ռազմանավերն-
ուար նավահանդիսաները դալու առթիվ: Այսպես,
դերմանական «Շեղվիդ-Հոլցտայն» ռազմանավի Ամըս-
տերդամում կատարած այցելության առթիվ կարմիր
ողնության աշխատողները նավահանդսուում ամրաց-
րին տրանսպարանտներ՝ հակապատերազմական լո-
գունդներով և ընկ. Թելմանի պաշտպանության լո-
գունդներով:

Թաշիստական ռազմանավի մոտ կանգնած շողենա-
վերից մեկում նրանք «Խնտերնացիոնալ»-ի հաղոր-
դում կազմակերպեցին բարձրախոսի միջոցով: Խըմ-
բական ճառերով դիմեցին դերմանական նավազներին:
Գերմանական նավազներին բաժանվեցին առերելվույթ
անվնաս լուցկու տուսիեր, վորոնց մեջ նրանք դտան-
պատերազմի դեմ ուղղված ե ընկ. Թելմանի աղատու-
թյան ոգտին խոսող մանիֆեստներ:

Գերմանական շողենավերի դալու առթիվ նույն-
պիսի յելույթներ կազմակերպեցին կարմիր ողնու-
թյան ակտիվիտաները նաև ուրիշ յերկրներում— Պոր-

տուլալիայում, Մեքսիկայում, ԱՄՆ-ում և Կանադայում:

Պատերազմական պատրաստությունների դեմ ուղղված պայքար և հանդիսանում նաև պայքարն ընկ. Ռակոչի ազատության համար Հունգարիայում, ընկ. Սնտիկույնենինը՝ Ֆինլանդիայում, ընկ. Իցիկավայինը՝ Ճապոնիայում, Խոտալիան Փաշիզմի բանտերում Հյուծվող ընկ. ընկ. Գրամշինին ու Տերրաչինինը, քաջարի Լուի Կարլոս Պրեստեսինը՝ Բրազիլիայում և պայքարը վտարանդի հակաֆաշիստների հալածանքների դեմ:

Ամեն մի պայքար Փաշիզմի դեմ պայքար և պատերազմի սպառնալիքի դեմ, քանի վոր Փաշիզմը պատերազմի ճանապարհ և հարթում: Այդ պայքարին դործոն կերպով մասնակցելը կարմիր ոգնության բոլոր սեկցիաների և բոլոր անդամների ամենորյա խընդիրն և հանդիսանում կապիտալի և դաղությային ըստըրկության յերկրներում:

Կարմիր ոգնության սեկցիաների մասնակցությունը Փաշիզմի դեմ ուղղված ընդհանուր շարժմանը արտահայտվել և նաև ազգային ու միջազգային մասշտաբի հակասատերազմական և հակաֆաշիստական կոնդրեսներին նրանց բերած մասնակցությամբ:

Կարմիր ոգնության պատգամավորները հանդեռ յեկան իմպերիալիստական պատերազմի դեմ ուղղված համաշխարհային կոնդրեսում 1932 թվին Ամստերդամում, պատերազմի դեմ ուղղված համաշխարհային պատանեկական կոնդրեսում 1933 թվին Փարիզում, Շանհայի նախապատերազմական կոնդրեսում (1933 թ.

աեպտեմբեր), համաշխարհային ուսանողական կոնգրեսում 1934 թվին Բըյուսելում, պատերազմի և Փաշիզմի դեմ ուղղված կանանց միջազգային կոնգրեսում 1934 թվին Փաքիզում:

Մոնտեվիդեոյի հակապատերազմական կոնգրեսում Արգենտինայի, Ուրուգվայի, Չիլիի և Բրազիլիայի կարմիր ողնության սեկցիաները ներկայացված են յին 42 պատգամավորով։ Այդ բոլոր կոնգրեսներում, վորոնք բացառիկ նշանակություն ունեյին հակապատերազմական շարժման զարդացման համար, կարմիր ողնությունը պատգամավորներին հայթայթել եր հատուկ նյութ, վորը սրում եր ուշադրությունը պատերազմի ուղին հարթող տեսորի նկատմամբ և մատնանշում եր Փաշիստական ռազմական կամայականության զոհերի աղատության համար մղվող միջազգային պայքարն ուժեղացնելու անհրաժեշտությունը։

Մի ամբողջ շարք յերկրներում, հատկապես Ֆրանսիայում և Իսպանիայում, պայքարը պատերազմի և Փաշիզմի դեմ հանդել ե ժողովրդական լայն ճակատի ստեղծման։ Ժողովրդական ճակատը Ֆրանսիայում փակեց Փաշիզմի ճանապարհը և վերածվեց պատերազմի դեմ ուղղված ժողովրդական հզոր մի շարժման։ Ժողովրդական ճակատը Ֆրանսիայում խոչըրադույն հաջողություններ ձեռք բերեց և կարողացավ իշխանության գլուխը կանգնեցնել այնպիսի մի կառավարություն, վորը կատարում ե միասնական ժողովրդական ճակատի պահանջները։

Իսպանիայում ժողովրդական ճակատին հաջողվեց տապալել Փաշիզմին համակրող կառավարությանը,

Հաջողվեց ուժեղ հարված հասցնել Փաշիզմին և ազատել 30.000 հակաֆաշիստ կալանավորների:

Կարմիր ոգնության աշխատադները մասնակցում են ժողովրդական ճակատի բոլոր ցույցերին և մահի-Փեռտացիաներին, հանդես դալով Փաշիստական տեռուրի վոհերի հետ միջաղքային համերաշխության լուսնդներով: Այդ ցույցերում հանդես են դալիս Կարմիր ոգնության հոետորները: Իսպանիայում, ինչպես և Ֆրանսիայում, կարմիր ոգնության լոգունդները, ինչպես, որինակ, բոլոր քաղաքական կալանավորներին ներումն չնորհելու լուծունդը, դառնում են ամբողջ ժողովրդական ճակատի լոգունդներ: Այդ լուսնդը դարձավ ժողովրդական ճակատի ընտրական ծրագրի պահանջը:

Իսպանիայում այս լուսունդն այնքան խորն եր թափանցում մասսաների գիտակցության մեջ, վոր մասսաները շարժվեցին դեպի բանտերը և ազատ արձակեցին կալանավոր հակաֆաշիստներին:

Հակապատերազմական կալանավորված մարտիկների պաշտպանությունը վաղուց ի վեր կարմիր ողնության խնդիրն ե հանդիսացել բոլոր յերկրներում: Այսպես, որինակ, Ռումինիայում վերջին ժամանակներս կարմիր ոգնության ակտիվիստները կարողացան նվաճել ամենալայն ժողովրդական մասսաներին հակապատերազմական կալանավորված մարտիկների պաշտպանության գործի համար: Այդ առանձնապես հստակ դրսեվորվեց Ռումինիայի հակապատերազմական կոմիտեյի դեկավար, կապիտալիստական դասակարգային արդարադատության կողմից հալածվող

պլրոֆեսոր Կոնստանտինեսկույի (Կասսայի) համար մղվող պայքարում, ինչպես նաև պատերազմի դեմ մարտնչող քաջարի Աննա Պառւկերի պաշտպանությանը նվիրված յելույթում: Փետրվարի 29-ին ընկ. Պառւկերը— հակապատերազմական այդ ակտիվ մարտիկը— 19 ուրիշ հակաֆաշխաների հետ կանգնեց զինվորական դատարանի առաջ:

«Վորտե՞ղ եք ապրում», — հարցրեց նրան Հարցաքննության սկզբում դատարանի նախադահը.

Նրա պատասխանը կարճ եր և հստակ.

«Արդեն 8 ամիս ե, ինչ ապրում եմ Վակառեշտիի բանտում. ձերբակալվել և վոստիկանության կողմից վերք եմ ստացել այն պատճառով, վոր պայքարել եմ խաղաղության և ոռոմինական ժողովրդի բարիքի համար»:

Ի պաշտպանություն այդ քաջարի կնոջ՝ Ռումենիայի կարմիր ոզնությունը մորթիվացիայի յենթագիեց ազգաբնակչության ամենալայն չքաններին: Հարյուրից ավելի փաստաբաններ յերկրի բոլոր ծայրերից հայտարարեցին, վոր ցանկանում են պաշտպանել պատերազմի և ֆաշիզմի դեմ մարտնչող այդ կնոջ: Մոտ 2000 վկաներ հայտարարեցին, վոր ցանկանում են ցուցմունք տալ դատավարության ժամանակ: Գրեթե ամեն որ Ռումենիայի բուրժուա-դեմոկրատական թերթերը յերկրի բոլոր ծայրերից յեկած բողոքներ ելին տպագրում բանվորների, ծառայողների, գյուղացիների, ինտելիգենտների և գիտնականների ստորագրություններ: Արտասահմանում նույնպես հումանիտարիզմի ժամանակակից ծավալվեց Աննա Պառւկերի ապատության

ողտին։ Վոչ միայն տաքրեր ուղղությունների հակա-
ֆաշիստական կազմակերպությունները, այլ նույնիսկ,
որինակ, հանրապետական սպաների միությունը ֆը-
րանսիայում գրավոր պահանջեց ազատել Աննա Պառ-
էլերին։



Տեռորը և հալածանքները չեն կարող խանդարել
կարմիր ոգնության ակտիվիստներին աշխատելու պա-
տերազմի և ֆաշիզմի դեմ պայքարող կալանավորված
ժարուիկների ազատության համար։ Նրանք մոքիլի-
զայիսյի յեն յենթարկում աղդաբնակչության ամենա-
յայն շրջաններին, նրանք ոգնում են հզոր ժողովրդա-
կան ճակատը կուիել պատերազմի և ֆաշիզմի դեմ,
պատերազմի ճանապարհ հարթող սպիտակ տեռորի
դեմ։

ՄԻԶԱԳԳԱՅԻՆ ԿԱՐՄԻՐ ՈԳՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆ ԱՌԱՆՁԻՆ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Հարավային Ամերիկայում Պարագվայի և Բոլի-
վիայի միջև Զակոյի մարզի ամենահարուստ նավթա-
հանքերի համար բնուկված յեռամյա պատերազմի
ժամանակ ցայտուն կերպով դրսեվորվեց պայքարը
պատերազմի դեմ, վոր կազմակերպել եր Արգենտինա-

յի կարմիր ողնությունը : Կարմիր ողնության Արդենտինյան սեկցիայի կենտրոնական կոմիտեն վերցրեց Պարագվայի չեփությունը , Բունեոս-Արգենտադաքի կարմիր ողնության կազմակերպությունը վերցրեց Բոլիվիայի չեփությունը : Բոլոր միջոցներով աջակցել յերկու յերկրներում կազմակերպելու այնպիսի կարմիր ողնություն , վորն ընդունակ լինի ողնության դաշտ հակապատերազմական մարտիկների դեմ ուղղված սպիտակ տեռորի ու պատերազմի զոհերին , այդպիսի նպատակ եր առաջադրել իրեն այդ կազմակերպությունը :

Ստեղծված եր հատուկ հանձնաժողով , վորի առջև խնդիր եր գրված կապ հաստատել յերկու յերկրների միջև կալանավորների և նրանց ընտանիքների միջոցով , ինչպես նաև կապ Պարագվայի և Բոլիվիայի փախստականների միջև : Հանձնաժողովը հատուկ ուշադրություն նվիրեց սահմանամերձ շրջաններում կարմիր ողնության խմբեր կազմակերպելուն , այն հաշվով , վոր այդպիսի ճանապարհով կապ ըստեղծվեր յերկրի ներսում յեղած զոհերի հետ : Հանգանակության միջոցով մեծ գումարներ հավաքվեցին : Շուտով հաջողվեց կապ հաստատել Պարագվայի հակապատերազմական կալանավորված մարտիկների հետ , և այդպիսով հիմք ստեղծվեց այդ յերկրում կարմիր ողնության սեկցիա կազմակերպելու համար : Արդենտինյայի կարմիր ողնությունը հակապատերազմական նյութեր հրատարակեց հնդիկների լեզվով և մորիլիզացիայի յենթարկելով հնդիկ մասսաներին , զգալիորեն ուժեղացրեց հակապատերազմական պայ-

քարը և բարեկավեց այդ պայքարի զոհերին ողնելու գործը: Բոլիվիայում աշխատանքը նույնպես լավ արդյունքներ տվեց:

1933 թվին «Դե Զելեն Պրովինսիեն» կրեյսերի վրա Նիդերլանդական Հնդկաստանում ինդոնեզ և Հուանդացի նավաստիների ապստամբություն բռնկվեց: Ապստամբության ճնշումից հետո, վորի ընթացքում 23 ապստամբ նավաստիներ սպանվեցին, կատաղի հալածանք սկսվեց ձերբակալվածների դեմ: Հուանդական բուրժուական մամուլը նրանց համար մահապատիժ եր պահանջում: Հուանդիայի կարմիր ողնության անդամների աջակցությամբ մյուս յերկրներում անմիջապես ծավալվեց ձերբակալվածների պաշտպանության լայն կամպանիան: Կառավարությանը ուղարկվեցին բողոքի բազմաթիվ պատվիրակություններ, բողոքի հարյուրավոր բանաձեռք ուղարկվեցին զինվորական ատյանին: Հուանդիայում ստեղծվեց Ազատադրման միջազգային կոմիտե հեղափոխական կաղմակերպությունների ներկայացուցիչների և ականավոր գործիչների գլխավորությամբ: Այդ յերաշների ճնշման ներքո զինվորական դատարանը չհամարձակվեց մահվան դատավճիռ հանել նավաստիների նկատմամբ:

1932 թվին Պերույում խոռվություն բռնկվեց «Գրառու» և «Բոլոնյեն» ուազմանավերի վրա, այնտեղ տիրող աշխատանքի ծանր պայմանների հետեւանքով: Բունտը արյան մեջ ճնշվեց և 26 նավաստի դատապարտվեցին ընդհանուր առմամբ 325 տարվա տա-

ժանակիր աշխատանքների։ Պերույի կարմիր ոգնությունը, բողոքի և համերաշխության կամացանիա ծավալելով, կարողացավ 1934 թվին ազատել տալ նավաստիներին։



Մաշխատական Բուլղարիան հայտնի յե իր անողորմ, սանձարձակ տեսորով՝ ուղղված հեղափոխական զինվորների, նավաստիների և հակառատերազմական մարտիկների դեմ։ 95 մահապատժի դատավճիռ հանվեց 1933 թվի մայիսից մինչև 1935 թվի վերջն ընկնող ժամանակամիջոցում։ Դեռ նախքան դատավճիռ հանելը՝ 17 հակամիլիտարիստներ սպանվեցին, 95-ից 11 դատավճիռ ի կատար ածվեցին։ Սպանված հակամիլիտարիստների մեջ եյին բուլղարական նավատորմում հակառատերազմական աշխատանք կազմակերպող կոմյեքտիտական Լյուտիբրոդսկին և զինվոր Վոյկովը։

Բուլղարիայի կարմիր ոգնությունը հանդես յեկավ մահվան դատապարտված զինվորների ու նավաստիների սպաշտականությամբ և մյուս հեղափոխական կազմակերպությունների հետ միասին բողոքի և փըրկության կամպանիա կազմակերպեց։ Ընդհատակի պայմաններում հաջողվեց գրավոր բողոքների համար հավաքել մի քանի հազար ստորագրություն, բողոքի ցույց կազմակերպել Ռուսաստան, թուուցիկներ տարածել և բողոքի պատվիրակություն ուղարկել Սոֆիա։ Նավահանգիստային Բուլղար քաղաքում զինվորների դատավարության ժամանակ այն շնորհի վըրա, ուր տեղի յեր աւելնում դատավարությունը, կարմիր դրոշ բարձրացվեց հետեւյալ մակագրու-

թյամբ՝ «կորչի՛ ֆաշիստական դիկտատուրան։ Կորչե՛ն
հեղափոխական զինվորների և նավաստիների դեմ
ուղղված դատավարությունները»։

Կարմիր ոգնությունը լայն հասարակայնությունը
մորիլիզացիայի յենթարկեց նաև միջազգային մասշ-
տաբով։ Բոլոր յերկրներում բուլղարական հյուպատո-
սություններն եյին տեղում ամեն տեսակ կազմակեր-
պությունների բանաձևերը և մասսայական ժողովնե-
րի բողոքները։ Կարմիր ոգնության կողմից կազմա-
կերպված ցույցերը սպառնալի պահանջում եյին՝
«Ազատությունն բուլղարական հեղափոխական զինվոր-
ներին և նավաստիներին»։

Փարիզում ստեղծված եր «Բուլղարական ժողո-
վըրդի բարեկամների կոմիտե» տարբեր ուղղություն-
ների կազմակերպությունների ներկայացուցիչներով։
Կոմիտեյի յելույթներին միացան արվեստի աշխա-
տողները, գիտնականները, բժիշկները, պրոֆեսոր-
ները։ Կոմիտեն մի քանի անգամ փաստաբաններ ու-
ղարկեց Բուլղարիա տեղում պաշտպանելու համար մե-
ղադրյալներին, վորոնք գտնվում եյին մահապատճե-
սպառնալիքի տակ։ Բուլղարիա ուղարկվեց տարբեր
քաղաքական ուղղությունների ներկայացուցիչներից
կազմված միջազգային մի պատվիրակություն։ Պատ-
վիրակությանը հանձնաբարված եր ամբողջ աշխարհի
հակաֆաշիստների բողոքը հայտնել դատավարության
դեմ։ Զանազան յերկրներում բողոքի ցույցերը պաշա-
րում եյին բուլղարական հյուպատոսաբանները։

Հունաստանում, Շվեդիայում և ԱՄՆ-ում զինվոր-
ների խմբերը բողոքեցին բուլղարական հյուպատոսա-

բանների առջև, դրանով արտահայտելով իրենց համերաշխությունը բուլղարական հակապատերազմական մարտիկների հետ:

Լեհաստանի կարմիր ողնությունը, վորն աշխատում է ընդհատակի և ուժեղ հալածանքների պայմաններում, մասսայական տիրաժով թուոցիկ բաց թողեց բուլղարական զինվորների և նավաստիների դատավարության դեմ:

Քաջարի հակաֆաշխտների և պատերազմի դամ պայքարող մարտիկների պաշտպանության կողմն ուղղված համերաշխության այդ միջազգային կամպանիայի շնորհիվ միայն մնացած 84 դատավճիռները մինչեվ այժմ ի կատար չեն ածված: Բոլոր յերկրների աշխատավորներն առաջիկայում ևս աչալուր կերպով կհետեւվեն և թույլ չեն տա ի կատար ածել դատավճիռները:

Հունական 22 կալանավոր նավաստիները գրում են այն մասին, ինչ զգում են պատերազմի դեմ մարտընչող հեղափոխական զինվորներն ու նավաստիները, վորոնք ստացել են կարմիր ողնության աջակցությունը, համերաշխության միջազգային շարժման աջակցությունը.

«Մենք ծնողներ չունենք, բայց մենք գտանք ավելին— միջազգային կարմիր ողնությունը, վորը մեզ այնպես ե ողնում, ինչպես մայրն ե ողնում իր զավակներին»:

Այս խոսքերը բոլոր յերկրների և աշխարհամասերի կարմիր ողնության անխոնջ աշխատողների վարձատրությունն են հանդիսանում: Այս խոսքերը վկա-

յում են այն մասին, վոր կարմիր ողնության անդամներն իրենց պարտքը կատարում են այն ճակատում, ուր նրանց զետեղել ե հակապատերազմական պայքարը, և այդ պայքարը կկատարեն առաջիկայում եւ:

ԿԱՐՄԻՐ ՈԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆԱՍՏԱՆՈՒՄ

Զնայած բոլոր գժվարություններին, Զինական կարմիր ողնությունը վոչ միայն Զինաստանի խորհրդաւոն շքջաններում, այլև նրա մնացած մասում բացառիկ աշխատանք ե ծավալել պատերազմի զոհերին և հակաճապոնական շարժման մասնակիցներին ողնելու ուղղությամբ:

Զինական կարմիր ողնության անդամները Զինաստանի խորհրդային մարզերում բոլոր ջանքերը լարում են, վորպեսզի ամրացնեն Զինական կարմիր բանակը, վորը հանդիսանում ե խաղաղության բանակ, բոլոր ճնշվածների բարեկամը:

Զինաստանի խորհրդային շքջաններում կարմիր ողնությունը աշխատանք ե տանում նաև անմիջարար ռազմաճակատներում: Նա լայն մասսաներին կազմակերպում ե վիրավոր մարտիկներին ողնություն ցույց տալու համար: Նա միջոցների հանգանակություն ե կատարում դեղորայք, հագուստ և պարեն գնելու համար, վիրավորներին ողնելու նպատակով բժիշկների

խմբեր կազմակերպելու համար։ Կարմիր ողնության աշխատողների հատուկ խմբեր ճակատ են մեկնում մարտնչող կարմիր բանակայիններին նվերներ և ծնողների մասին լուրեր տալու համար։

Թիկունքում Զինական կարմիր ողնությունը կաղմակերպում և կարմիր բանակայինների և սպանված մարտիկների ընտանիքներին ողնելու գործը, հողմաշակելու և այլ կարիքների խնդրում։ Աշխատանքի այդ ճակատամասում իրենց ակտիվությամբ առանձնապես աչքի յեն ընկնում Միջազգային կարմիր ողնության պատանի բարեկամները։ Այսպես, որինակ, նրանք վայրու են հավաքում, բանող անասուններին են պահում, մարտիկների, սպանված կարմիր բանակայինների և պարտիզանների յերեխաների մասին են հոգում։

Եերենք մի քանի որինակ այն գործունեյությունից, վոր ծավալել և կարմիր ողնությունը Խորհրդային Զինաստանում։ Տունդու քաղաքում (Յանսիլի հահանդ, Կիսան դավառ) զինվորական հիմանդրանոցում պառկած եյին 800-ից ավելի ծանր վիրավորված կարմիր բանակայիններ և պարտիզաններ։ Մի անդամ առավոտյան հայտնի դարձավ, վոր թշնամիներն ուժեղ հարձակում են պատրաստում քաղաքի վրա։ Յեվահա Զինական կարմիր ողնությունն իր վրա վերցրեց քաղաքից այդ ուժ հարյուր ծանր վիրավորված մարտիկներին դուրս բերելու գործը։ Առավոտյան ժամը 8-ին կարմիր ողնության աշխատողները ձեռնամուխ յեղան վիրավորներին վոխադրելու, և ցերեկվա ժամը 2-ին բոլոր 800 հոգին ել արդեն ապահով տեղումն

հյին դտնվում : Կարմիր ողնությունը կարողացավ
այնպես քողարկել վիրավորների փոխադրությունը ,
վոր սպիտակ գվարդիականները չիմացան նրանց տե-
ղը : Իրենց տրամադրության տակ չունենալով վոչ մի
ժամանակակից փոխադրական միջոց , կարմիր ող-
նության անդամներն այդ հսկայական աշխատանքը
կատարեցին սեփական ձեռքերով ու ուսերով : Այստեղ
ել ակտիվ մասնակցություն ունեցան կարմիր ողնու-
թյան Պատանի Բարեկամները : Նրանց հանձնարար-
վեց հիվանդանոցի դեղորայքի և սարքավորման փո-
խադրությունը :

Ահա մի ուրիշ որինակ : Ցերը սպիտակ բանակը
ներխուժեց Յոյանոի նահանգը , այդ մարզի մոտ 20
հազար բնակիչները փախան Գանկինի արևմտյան ա-
փը , վորպեսդի սպիտակ գեներալների հրեշային ան-
դիմությունների զոհը չղապնան : Կարմիր ողնությունը
փախստականներին պատերազմական դործողություն-
ների թատերաբեմից վեցցրեց իր պաշտպանության
տակ : Նա վողի , պարենի և հազուստեղենի լայն հան-
գանակություն կազմակերպեց փախստականների ող-
տին , հատուկ խմբեր առանձնացրեց , վորոնք մըշ-
տական կազ եյին պահպանում փախստականների հետ
և մասսայական աշխատանք եյին կազմակերպում
նրանց մեջ : Ի միջի այլոց , կարմիր ողնությունը հա-
տուկ ճամբար կազմակերպեց ծերունիների և յերե-
խանների համար՝ տալով ավելի լավ սնունդ : Նա փա-
խստականներին ծղնոտ հայթայթեց կարմիր բանա-
կայինների համար սանդալներ գործելու նպատակով և
ամեն կերպ աշխատեց բարձրացնել փախստականների

տրամադրությունն ու պահպաննց նրանց արիությունը հակառակավոխության դևմ պայքարելու համար։ Այդպիսի աշխատանքի չնորհիվ շուտով հաջողվեց փախուստականների մեջ ստեղծել լավ զինված մարտիկների մի ջոկատ, վորը հետ խլեց կորցրած մարդու։

Խորհրդային Զինաստանում, Լունցզյան գետի ըրջանում (Գուանդունի նահանգ) 8—14 տարեկան յերեխանները հավաքեցին գնդակոծությունից հետո մընացած փամփռուշտներն ու պարկուճները և ավելին խորհրդային ուղղմական գործարանին։ Նույն այդ մանկական խմբերը բոլոր ուժերը գործադրեցին, վորպեսզի անվտանգ տեղ ուղարկեն և հիվանդանոցները հացնեն իրենց ճանապարհին հանդիպած ծանր վիրավոր կարմիր բանակայիններին։ Վիրավոր կարմիր բանակայինների այն հարցին, թե «Ովքե՞ր եք դուք», յերեխանները հապատությամբ պատասխանում եյին՝ «Մենք պիոններներ ենք և միենույն ժամանակ կարմիր ոգնության անդամներ»։

Ամենաանողոք հալածանքների պայմաններում կարմիր ողնությունը Գոմինդանական Զինաստանում հերոսաբար ողնում և հակածապոնական շարժման հազարավոր հալածված վիրավոր մարտիկների։ Հակածապոնական մասսայական շարժման ձերբակալված հայտնի առաջնորդ Պան Հուն-Մենի և նրա ընտանիքի պաշտպանության համար ստեղծված եր իրավաբանական կարինետ։ Շանհայում կարմիր ողնությունը դրամի, պարենի և հազուստեղենի հանդանակություն կազմակերպեց հակածապոնական աղատական

շարժման այն մասնակիցների ոգտին, վորոնք վտարված եյին Մանջաւրիայից և փախել եյին հալածանքներից: Կարմիր ոգնության յելույթների շնորհիվ և մասսաների ճնշման ներքո քաղաքային ինքնավարությունը Բեյպինում, Շանհայում, Տյանցզինում և այլ քաղաքներում հարկադրված յեղավ այդ փախառականների համար ապահովել ապաստարան և բժշկական ոգնություն: Փախստականների ոգտին կարմիր ոգնության կազմակերպած դրամական հանդանակություններն անցկացան մեծ հաջողությամբ:

Որ ըստ որե ամբողջ Չինաստանում ամրանում և ազատագրական հուժկու շարժումը ճապոնական իմպերիալիզմի դեմ, վորը ձգտում է ծառայագրել ուստրկացնել չինական ժողովրդին: Այդ շարժումն ընդուրկում է բանվորների, գյուղացիների և մեծ մասամբ ինտելիգենցիայի լայն մասսաներին:

Ծագում է առնում չինական ժողովրդի հակախմարիալիստական լայն միասնական ճակատը, ընդհանուր հուժկու ժողովրդական շարժում ճապոնական իմպերիալիզմի դեմ, Չինաստանի փրկության համար:

Բայց Նանկինի կառավարության չինական բանակում ել ամրանում է հակախմարիալիստական շարժումը: Գոմինդանականների խմբերն ավելի ու ավելի հաճախակի յեն պահանջում դադարեցնել պայքարը Չինական կարմիր բանակի դեմ և բոլոր ուժերն ուղղել ամբողջ չինական ժողովրդի թշնամու — ճապոնական իմպերիալիզմի դեմ: Ուհանում և Հանկոույում զինվորների մեջ մի քանի անգամ յերեացել են հա-

կաճապոնական լոգունգներով պատված պլակատներ։ Մամուլը նշել է մի շաբք դեպքեր, յերբ զորամասերը հրաժարվել են կարմիր բանակի դեմ դուրս դալ։ Այսպես, որինակ, Գույշժոույի բանակի 25-րդ կորպուսի զորամասերը այդ բանակի ուրիշ զորմասերի հետ միասին (ընդամենը 20.000 հզդի) հրաժարվեցին կովել կարմիր բանակի դեմ։

Ճապոնական իմպերիալիզմի հրամանով «չինական» իշխանությունները փորձում են այդ աղատագրական շարժումը ճնշել տեսորի ողնությամբ։ Զանազան քաղաքներում ուսանողների և աշխատավորների հակածապոնական հուժկու ցույցերի ժամանակ շատ ցուցարարներ վիրավորվեցին և սպանվեցին։ Հակախմուերիալիստների և աղատագրական շարժման մարտիկների մեջ մասսայական ձերբակալություններ կատարվեցին։

Չինական ժողովրդի աղատագրական պայքարի դեմ ուղղված այդ սուր տեսորի շրջանում Չինական կարմիր ողնության ինդիքները մեծանում են. նա աջակցություն և ցույց տալիս հակախմուերիալիստական աղատագրական պայքարի բոլոր զոհերին։

Մենք կհիշեցնենք այն մեծ, մասսայական կամսանիայի մասին, վոր ծավալվեց «Սինչեն» ժուրնալի փակման և Գոմինդանական իշխանության կողմից նրա խմբագիր Դու Չուն-Կոււանի ձերբակարման առթիվ։ Ժուրնալն արդելի և նրա խմբագիրը մեղադրվել եր, ճապոնական իշխանությունների ցուցմունքով, ժուրնալում տպագրված մի հոդվածի համար, վորն ուղղված եր ճապոնական իմպերիալիստա-

կան դիշատիչների դեմ : Դատարանում դու Զուն-կու-
անը համարձակորեն հայտարարեց . «Իմ ժուրնալը ի-
բեն նպատակ է առաջադրում պայքարել իմպերիա-
կազմի դեմ , դիշատիչ քաղաքականության դեմ : Յես
ինքս ընիկ հյուսիս-արևելյան նահանգներից եմ , վոր
այժմ գրավել են ճապոնացիները : Խօնչու կարող եմ
չըռղոքել և չողայքարել նվաճողների դեմ» :

Դատարանում ներկա յեղողներն այդ հայտարա-
քությանը պատասխանեցին հետեւյալ բացականչու-
թյուններով . «Կորչի՛ ճապոնական իմպերիալիզմը :
Կորչե՛ն չինական դավաճանները» : Դատարանի դահ-
լիճում բաղմաթիվ հակախմապերիալիստական թուղթիկ-
ներ տարածվեցին : Բողոքների հետեւանքով դատարանը
և ճապոնական հյուսպատության ներկայացուցիչը
սովորված յեղան թողնել դահլիճը :

Դատավճոփի ընդունումից հետո բողոքներ հնչեցին
վոչ միայն Չինաստանում , այլև արտասահմանում :
Բողոքի այդ շարժմանը միացան վոչ միայն աշխա-
տավորական ժամաները , այլև այնպիսի կազմա-
կերպություններ , ինչպես Շանհայի փաստարանների
միությունը , Շանհայի առևտրական պալատը : Ֆիլ-
ուինյան կղզիների չինական առևտրական պալատը
2000 դուռը վորհաղեց Դու Զուն-կուանի կնոջ
բանտը մթերք տանելու ծախսերի համար : Չինական
վտարանդիներն Ամերիկայում , Հոլանդիայում և այ-
լէրներում չինական կառավարությանն ուղարկեցին
տեսորիստական դատավճոփի դեմ ուղղված բողոքի
հեռաղբեր :

Մասսայական շարժման ձևաչափ ներքո Գոմինդա-
նի կառավարությունը հարկադրված յեղավ գերա-
պույն դատարանի միջոցով հայտարարելու, թե «նախ-
կին դատավճիռը սխալ էր, ուստի և վերացվում է»:
Խմբագիրն ազատ արձակվեց:

Հակաճապոնական մարտիկների, տեսորի զոհերի
հետ համերաշխվելու վերաբերյալ կարմիր ողնու-
թյան տված լողունզներն ավելի ու ավելի յեն դառ-
նում ամբողջ չորս հարյուր միլիոնանոց չինական ժո-
ղովրդի լողունզները:

Ի ՊԱՇՏՈԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱԲԵՇՍԱՆԻ ՎՐԱ ԿԱՏԱՐ- ՎԱԾ ՖԱՇԻՍՏԱԿԱՆ ՀԱՐՁԱԿՄԱՆ ԶՈԼԵՐԻ

Ֆաշիստական իտալիայի հարձակումը հարեշա-
կան խաղաղ ժողովրդի վրա ամբողջ աշխարհում և
հատկապես աշխատավորության մեջ վրդովմունքի ու
զզվանքի ալիք առաջցրեց պատերազմի ֆաշիստական
հրձիգների հանդեպ: Մասսաները ցույցեր արին բոլոր
իտալական հյուպատոսարանների ու դեսպանատնե-
րի առջև կոնդոնում, Փարիզում, Ռոտերդամում,
Կոպենհագենում, Պրադայում, Նյու-Յորքում, Շան-
հայում: Շատ յերկրների՝ Հռոմաստանի, Ֆրանսիայի,
Անդիայի, ԱՄՆ-ի և Հարավային Աֆրիկայի նավաս-
տիները հրաժարվեցին իտալական նավերը բարձելուց
և իտալիա ռազմամթերք ուղարկելուց:

Սկսված պատերազմի մասին առաջին իսկ լուրերն
ստանալիս՝ Միջազգային կարմիր ողնության սեկցիա-

ներն սկսեցին կոչ անել ոգնության դալու պատերազմի զոհերին :Կարմիր ոգնության իտալական, ֆրանսիական, բելլիական և դվիցերիական սեկցիաներն անմիջապես մի կոչով դիմեցին հասարակայնությանը և կազմակերպեցին հուժկու մի շարժում Փաշիստական հարձակման զոհերին ոգնելու ուղղությամբ :

Կարմիր ոգնության ավստրիական սեկցիան, վորն աշխատում և անլեզմալ պայմաններում, հետապնդումների և տեռորի պայմաններում, իտալական զորքերը Հարեւստան մտնելուց անմիջապես հետո բաց թողեց Ավստրիայի աշխատավորներին ուղղված մի կոչ 30.000 որինակից : Նա դիմեց Ավստրիայի աշխատավոր ժողովրդին և կոչ արավ համերաշխելու իտալիային և Հարեւստանի պատերազմի զոհերի հետ : Այդ կոչի մեջ առանձնապես ընդգծվում եր, վոր «ավստրիական ժողովրդի ստրկացումն ու իրավագրկումը տեղի յեն ունենում նույն Մուսոլինիի պաշտպանության ներքո, վորն այժմ դեպի սպանդ ե քշում իտալական բանվորներին և գյուղացիներին» :

Այդ կոչի մեջ, վորին հավանությամբ և խանդավառությամբ դիմավորեց Ավստրիայի աշխատավոր աղդաբնակչությունը, առանձնապես ընդգծվում եր Ավստրիայում մղվող աղատագրական պայքարի կապն իտալական ժողովրդի աղատագրական պայքարի հետ :

Այսպիսով, Ավստրիայի կարմիր ոգնությունը կարողացավ Հարեւստանում մղվող պատերազմի դեմ ուղղված պայքարը շաղկապել իր սեփական յերկրում ծավալված համերաշխության շարժման հետ :

Հազարավոր իտալացիներ փախան Յուգոսլավիա,
վորակեսղի աղասիվեն Հարեշստանում մեռնելուց և
ուաղմական տեռորի հետապնդումներից : Այդտեղ
կարմիր ողնությունը, վորը նույնպես անլեզար և,
անմիջապես մոբիլիզացիայի յենթարկեց բոլոր ուժե-
ւը, վորպեսղի թույլ չտա Իտալիային հանձնելու ի-
տալացի փախստականներին :

Հունաստանի կարմիր ողնությունը Հարեշստանի
վրա կատարված ֆաշիստական հարձակման առաջին
իսկ որերին պատերազմի դեմ ուղղված տասնյակ հա-
զարավոր թուուցիկներ տարածեց աշխատավորական
մասսաների և ամենից առաջ նավաստիների մեջ : Նրա
գործունելությանը պետք է վերագրել այն փաստը,
վոր շատ հունական նավերի անձնակազմը հրաժարվեց
ուաղմամթերք փոխադրել Իտալիա կամ Արևելյան Աֆ-
րիկա : Պատրաստամ կարմիր ողնության աշխատավոր-
ները հակապատերազմական թուուցիկներ բաժնեցին
նավահանդիստ յեկած իտալական և դերմանական նա-
վերի նավաստիներին : Վերջի վերջո գործն այնտեղ
հասավ, վոր հակապատերազմական հզոր ցույց ըս-
կըսվեց այդ նավերի վրա : Իտալական և դերմանական
նավաստիները Հունաստանի աշխատավորության հետ
ձեռք-ձեռքի ցույց արին իտալական և միջազգային
ֆաշիզմի դեմ : Նորից և նորից հունարեն, իտալերեն
և գերմաներեն լեզուներով բացականչություններ հըն-
չեցին՝ «Կորչի՛ Փաշիզմը : Կորչի՛ պատերազմը Հա-
րեշստանում» :

ԱՄՆ-ում ստեղծված եր Հարեշստանի պաշտպա-
նության միացյալ կոմիտե : Հարեշստանին ողնելու

գործում առանձին ակտիվություն զարդացրին նեղ-
րական կազմակերպությունները։ Դեղորայք և բուժա-
բաններ ուղարկեցին Հարեցտան։ Հանդանակությու-
նը հենց միայն մի ժողովում տվեց 305 դոլար։ Հո-
լանդիայում և Կանադայում հրատարակվեցին հատուկ
քացիկներ պատերազմի դոհերի ոգտին։ Արդենտինա-
յում ստեղծվեց ոգնության հատուկ կոմիտե։

Միջազգային կարմիր ողնության Փրանսիական
սեկցիան, կարմիր ողնության գործադիր կոմիտեյի
վորոշումների վորով գործելով, մեծ ակտիվություն
ծավալեց Հարեցտանի ոգտին։

Անդիմայից Հարեցտան ուղարկվեց սանիտարա-
կան մի ողանավ։ Անդիմացի կանայք Արևելյան Աֆ-
րիկա պատերազմական գործողությունների դաշտն
ուղարկեցին անդիմացի գթության քույրերի մի ջո-
կատ։ Այդ նպատակով կատարված հանգանակությու-
նը կարճ ժամանակամիջոցում տվեց 100.000 ֆրանկ։

Կարմիր ողնության նախաձեռնությանը պետք է
վերադրել այն բանը, վոր Ֆրանսիայի հասարակո-
կան կյանքում հայտնի մի ամրող շարք գործիչներ
գործուեցին ստեղծել «Հարեցական պատերազմի դու-
րին ողնող կոմիտե»։ «Յեվրոպական ողնության» նա-
խադահ Մադլինա Բրաունը, «Յերեխաների իրավունք-
ների պաշտպանության լիգայի» գլխավոր քարտուղար
Յելենա Գոսսեն, մինիստր Պիեր Կոտը, հայտնի գիտ-
ական պրոֆեսոր Լանժեվենը, «Ֆրանսիայի ինստի-
տուտի» (Ֆրանսիայի բարձրագույն գիտական ինստ-
իտուտի) անդամ սոցիալիստ փաստաբան Ժան Լու-
իկն և շատ ուրիշներ հասարակայնությանը կոչ արի։

սուեղծել ողնության այդ կոմիտեն իրեն խնդիր առաջարկեց ողնություն ցույց տալ վիրավոր-ներին, սանիտարական նյութեր հավաքել, չփություն ստեղծել պատերազմի բազմաթիվ վորբերի նկատ-մամբ։ Հարեշստանին ողնելու շարժումը ամենալայն միասնական ճակատի բնույթ եր կրում։

Իր աշխատանքի առաջին իսկ որերին այդ կոմի-տեն բաց թողեց 50,000 բացիկ և 100·000 կրծքանը-շան, վորոնց վաճառքից գոյացած գումարը գործած-վեց Հարեշստանում մզվաղ պատերազմի զոհերին ող-նելու համար։ Փողոցային միտինգներ անցկացվեցին։ Ազգաբնակչության ամենալայն շրջանները խանդավա-ռությամբ վողջունեցին ողնության կոմիտեյի գործու-նեյությունը։

Համերաշխության շարժումը համակեց նաև յերե-իաներին։ Յերբ առաջին անգամ լուր ստացվեց այն մասին, վոր Փաշխտական ոմբածիզները սպանել ելին հարեշ յերեխաներին, Փրանսիական յերեխաների պատվիրակությունը բողոքով հանդես յեկալ իտալա-կան հյուպատոսարանի առաջ և իր համակրությունը հայտնեց Հարեշստանի ներկայացուցչին։

Պատերազմի և Փաշիզմի դեմ պայքարող կանանց համաշխարհային կոմիտեն Հարեշստան ուղարկեց դե-ղորայքով, հականեխիչ և վիրակապային նյութերով բարձած «խաղաղության ինքնաթիւ»։ Հարեշստանին ողնող կոմիտեն Հարեշստան ուղարկեց մի բուժարան 16 մահակալով, սանիտարական սարքավորումով և անձնակազմով։

Տասնյակ հազարավոր մարդիկ ընկան Արևելյան Աֆրիկայում պատերազմական գործողությունների դաշտում, այդ թվում վոչ միայն զինվորներ, այլև քաղաքացիական բնակչություն— տղամարդիկ, կանայք, յերեխաններ։ Այդ փաստը պատերազմի զոհերին ոգնող կոմիտեյին դժողեց հրավիրել Հարեցստանում մզվող Փաշիստական պատերազմի զոհերի ազնության յերրոպական կոնֆերանս։

Ֆրանսիայի, Հոլանդիայի, Սկանդինավիայի, իսպանիայի 100-ից ավելի պատղամավորները, գերմանական և իտալական հակաֆաշիստների ներկայացուցիչները, Հարեցստանի, Հաիթիի, Հյուսիս-ամերիկյան նեգրերի և գաղութային ժողովուրդների ներկայացուցիչները, ամեն ուղղության կազմակերպությունների և կուսակցությունների ներկայացուցիչները— կոմունիստներ, սոցիալիստներ, դեմոկրատներ, պացիֆիստներ և այլն,— 1936 թվի մարտի 29—30-ին իրար հանդիպեցին Փարիզում «Մեզոն դե լա շեմի»-ում («Քիմիայի տանը»), վորպեսզի քըննարկեն պատերազմի զոհերի ողտին աշխատելու միջոցներն ու ուղիները։ Այն մասին, թե ինչպիսի՞ մեծ հետաքրքրություն առաջացրեց այդ հավաքությն ամբողջ աշխարհում, վկայում են շատ կազմակերպություններից և անձնավորություններից կոնֆերանսի ստացած դիմումները։ Ֆրանսիական պարլամենտի արտաքին գործոց կոմիտեի փոխնախագահը, գրող Ժան Ռիշար Բլոկը, Կալե քաղաքի քաղաքապետը, Մոնրուժի քաղաքապետը, Փրկության բանակը, լորդ Սեսիլը, Ազգերի Լիգայի բարեկամների անդլիական

լիդան, արհեստակշական կազմակերպությունների միջազգային միության քարտուղարը և շատ ուրիշներ վողջույնի նամակներ ուղարկեցին:

Այդ կոնֆերանսում կարմիր ոգնությունից վորպես ներկայացուցիչ հանդես յեկավ ընկ. Շովեն: Նա խոսեց այն մասին, վոր պետք ե ողնել նաև Իտալիայի հակաֆաշիստներին, վորոնք հյուծվում են բանտերում պատերազմի դեմ պայքարած լինելու համար:

ԿԱՐՄԻՐ ՈԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱԿԱՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՈՐԸ

Այն ժամանակվանից, յերբ ոգոստոսի 1-ի որը պատերազմի դեմ պայքարելու միջազգային որ հայտարարվեց, բոլոր յերկրների կարմիր ոգնություններեն խնդիր առաջադրեց այդ որը բոլոր միտինդներում, ժողովներում և ցույցերում սպիտակ տեսորի գոհերի հետ համերաշխության և Խորհրդային Միության պաշտպանության կոչ անել: Հաճախ կարմիր ոգնության խմբերն իրենց վրա եյին վերցնում նախաձեռնությունը, և այնտեղ, ուր հակապատերազմական շարժումը թույլ եր, իրենք եյին ողոստոսի 1-ին հակապատերազմական ցույցեր կազմակերպում: 1934—35 թվականների ոգոստոսի 1-ը կարմիր ոգնության բազմաթիվ սեկցիաներն անցկացրին ընկ. Թելմանի ազատության համար պայքարելու նշանաբանով:

Բերենք միջազգային հակապատերազմական որվա
անցկացման մի քանի որինակներ :

Զվիշերիայի մի փոքրիկ գյուղում, Բեռնի մոտ,
կարմիր ողնության աշխատողները՝ մէ ողապարիկ
սարքեցին, վորի վրա կար հետեյալ կարմրալույս
մակագրությունը. «Ընդդեմ իմպերիալիստական պա-
տերազմի, հանուն թելմանի ազատության» : Յերեկո-
յան նըանք այդ աղապարիկը բաց թողին ազդային տո-
նի սոթիվ գումարված հայրենասիրական ժողովի գըլ-
խավերեռում (Զվիշերիայում՝ ոգոստոսի 1-ը աղդային
տոնի որ և) : Վինտերգուրում (մի ավան և Զվիշերիա-
յում, ուր գերակշռում են մետաղամշակման արդյու-
նաբերությունը և ռազմամթերքի արտադրությունը)
կարմիր ոգնության աշխատողները պատրաստեցին
պատերազմի դեմ ուղղված և Խորհրդային Միության
պաշտպանության լոգունդներ կրող հազարավոր թր-
ուուցիկներ և ավտոմոբիլի ու հեծանիվի ուժեղ շարժ-
ման ժամերին տարածեցին փողոցներում : Կարմիր
ողնության հոլանդական սելցիայի աշխատողներն ո-
գոստոսի 1-ին դեպի Գերմանիա տանող խճուղիների
վրա ներկերով գրեցին պատերազմի Փաշխտական
հրձիգների դեմ, ընկ. ընկ. թելմանի, Միրենդորֆի
ու Ռուցիու ազատության և Խորհրդային Միության
պաշտպանության վերաբերյալ լողունդներ :

Լիովայում կարմիր ոգնության աշխատողներն
աղավնիներ բաց թողին փոքրիկ գրոշակներով, վա-
րոնց վրա պարզ կերպով կարելի յեր կարդալ հետեվ-
յալ մակագրությունը. «Պաշտպանեցեք Խորհրդային
Միությունը» :

Ղեհաստանում ողոստոսի 1-ի որը կարմիր ողության ակտիվիտաները հեռագրաթելերի վրա կախեցին հակապատերազմական բաղունդներ կրող մեծ տրանսպարանտներ : Լողունգների տակ դանդ եր նըկարված և ապա դալիս եր հետեւյալ մակագրությունը . «Ուշադրություն : Ուժեղ լարման հոսանք : Կյանքի համար վտանգավոր ե» : Այդպիսի ճանապարհով նրանք մի քանի ժամով ուշացը ին տրանսպարանտների հանձնումը , սոլառնալի մակագրությամբ դանդը վախեցնում եր վոստիկաններին :



Նոր համաշխարհային պատերազմի վերահաս ըստ պառնալիքը , հիտլերյան ֆաշիզմի զավթողական պրալանները , ճապոնական զինվորականության պլանները պետք ե սրեն բոլոր յերկրների աշխատավորների ըդուաստությունը :

1937 թվի ողոստոսի 1-ի հակապատերազմական ուր պետք ե անցկենա ֆաշիզմի և նոր համաշխարհային պատերազմի վտանգի դեմ մղվող պայքարում բոլոր յերկրների աշխատավորների միասնական ճակատ էազմելու նշանաբանով : Բոլոր յերկրների աշխատավորական մասսաները միասնական լայն ճակատով դեմ զուրս կդան պատերազմի ֆաշիստական հրձիդներին և ի պաշտպանություն Խորհրդային Միության :

ԲՈԼՈՌ ՈՒԺԵՐՆ Ի ՊԱՇՏՈԱՍՈՒԹՅՈՒՆ ԽՈՐՀՐԴԱ- ՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ

Միջազգային կարմիր ողնության արտասահման-
յան սեկցիաների բոլոր յելույթներում և կամպանիա-
ներում նորից և նորից ծագում և մասսաների կողմից
խանդավառությամբ դիմավորվող լոգունդը՝ «Պաշտ-
ոպանեցե՛ք Խորհրդային Միությունը»։ Վորովհեան
կարմիր ողնության աշխատողներին կապիտալի յեր-
կըրներում հայտնի յե, վոր Խորհրդային իշխանու-
թյունն իր գոյության առաջին իսկ որվանից պարզո-
րոշ ու աներկմիտ կերպով խաղաղության քաղաքա-
կանություն և հետապնդում։ Խորհրդային իշխանու-
թյունը լիկվիդացիայի յե յենթարկել ստրկացման
ցարական գաղութային քաղաքականությունը։

Խորհրդային Միության խաղաղության քաղաքա-
կանությունն ունեցել եւ առավել ևս ունի վճռական
նշանակություն ընդհանուր խաղաղության պահպան-
ման համար։ Խորհրդային Միության քաղաքականու-
թյունը, ժողովուրդների մեծ առաջնորդ՝ Ստալինի
հանձնարեղ քաղաքականությունը, համաշխարհային
պրոլետարիատի պայքարը կոմինտերնի զեկավարու-
թյամբ՝ խոչընդուռ են հանդիսանում համաշխարհա-
յին իմպերիալիստական նոր հրդեհին։

Կարմիր ողնության աշխատողներին հայտնի յե,
վոր Խորհրդային Միությունը սոցիալիզմի յերկիրն

ե, միակ յերկիրն ե աշխարհումս, ուր ժողովրդի բարեկեցությունն աճում է որ ըստ որե, ուր մարդիկ յերջանիկ են, ուր գործազրկությունը և աղքատությունը մոռացված են, ուր մարդկանց գլխին յերեք չի տեղում բուրժուազիայի և նրա ֆաշիստական սպասվորների սպիտակ տեռուրը:

Սոցիալիզմի այդ յերկիրը նրանք պաշտպանում են Խորհրդային Միության պրոլետարների և աշխատավորների հետ կողք-կողքի, յերկրագնդիս պատերազմի գլխավոր հրձիգների՝ հիտլերյան Գերմանիայի և Ճապոնիայի պրովոկացիայի դեմ:

Ամբողջ աշխարհի կարմիր ոգնության աշխատողներին և բոլոր աշխատավորներին հայտնի յե, վոր Խորհրդային Միությունը համաշխարհային սոցիալիզմի և համաշխարհային համերաշխության ամրոցն և, այդտեղ և ապաստարանն ու հենարանը բոլոր հարածվող հեղափոխականների և հակաֆաշիստների համար, սպիտակ տեռորի հարվածի տակ ընկած բոլոր հակապատերազմական մարտիկների համար:

Այն ճշմարտությունը, վոր Խորհրդային Միությունը հանդիսանում է բոլոր յերկրների աշխատավորների հայրենիքը, ավելի ու ավելի խանդավառ հավանության և հանդիսալում ամրոցջ աշխարհի միլիոնավոր մասսաների կողմից: Աշխատավորները կապիտալի բոլոր յերկրներում ավելի լավ են ճանաչում Խորհրդային Միության թշնամիներին և իրենց սեփական մահացու թշնամիներին՝ պատերազմի գերմանական և ճապոնական հրձիգներին: Ամեն մի հարձակում սոցիալիստական հայրենիքի վրա միենույն ժամանակ

հարձակում և նրանց վրա, նրանց սեփական շահերի վրա: Դրա համար ել նրանք վողջունում են հերոսական, անպարտելի Կարմիր Բանակին, խաղաղության բանակին, վոր կանգնած ե սոցիալիստական հայրենիքի սահմանագլուխին, համաշխարհային սոցիալիզմի դործի պաշտպանության դիրքերում:

Կապիտալիստական բանտերում վո'չ փորձությունները և վոչ ել խոշտանգումները չեն կարող հուսահատության հասցնել կալանավոր հեղափոխականներին, վորովհետեւ նրանք դիտեն, վոր ոռւսական բոլցեիկները նույնպես տառապել են բանտերում և աքսորում ցարիզմի մտրակի տակ, բայց ցարական տեսորը չկարողացավ խոչընդուռ հանդիսանալ նրանց հաղթանակին:

Բոլցեիկյան կուսակցությունը և խորհրդային իշխանությունն ամբողջ ազգաբնակչությանը դաստիաբակում են բոլոր աշխատավորների միջազգային համերաշխության վոգով: Այդ ինտերնացիոնալիզմը յերեվան է դալիս և՝ Ավստրիայի փետրվարյան մարտերի զոհերի նկատմամբ հոյակապ համերաշխության մեջ, յերբ մի քանի որում նրանց համար հավաքվեց 1 միլիոն ժիինդ, և՛ իսպանական հակաֆաշիստների նկատմամբ համերաշխության յելույթում, յերբ Խորհրդային յերկրի աշխատավորները մի քանի որում հավաքեցին 2·500·000 Փրանկ. այն յերեւան է դալիս և՛ լնկ. ընկ. Թելմանի ու Մակոչի պաշտպանության համար կազմակերպված յելույթներում, և՛ Փաշիզմի զոհերի ոգտին կոլտնտեսություններում մոպրական հեկտարները մշակելիս, և՛ կապիտալի կալանավոր-

ների վրա չեֆություն վերցնելու աշխատանքում . այս
այժմ յերեան ե զալիս նաև սպիտակ տեռորի չնոր-
հիվ վորբացած յերեխաների համար ինտերնացիոնալ
մանկատաներ կառուցելիս :

Խորհրդային յերկրի աշխատավորների համերաշ-
խությունը սպիտակ տեռորի կողմից հետապնդվող
հակաֆաշխատների և նրանց ընտանիքների հետ , մեծ
հոգածությունը կապիտալի յերկրներից յեկած քաղա-
քական վտարանդիների մասին , վորոնք Խորհրդային
Միության մեջ իսկական ապաստան են գտնում և
իրավահավասար յեղբայրներ են հանդիսանում ,
ՄՈՊԲ-ի՝ միջազգային համերաշխատթյան այդ միլիո-
նանոց կազմակերպության գործունեյությունը հաղ-
թական Խորհրդային յերկրում , — այս բոլորը ցույց
են տալիս , վոր Խորհրդային Միության ազգաբնակ-
չությունը գործնականում կատարում ե ընկեր Ստա-
լինի հետեւյալ ցուցումը .

«Մինչև վերջը հավատարիմ լինել պրոլետարական
ինտերնացիոնալիզմի գործին , բոլոր յերկրների պրո-
լետարների յեղբայրական դաշինքի գործին» :

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
Պատերազմի պատրաստումը և սպիտակ տեսորը	3
Սպիտակ տեսորը պատերազմի պատրաստության մէջոց և	10
Միջազգային կարմիր ողնությունը պատերազմի դեմ մղվող պայքարում	20
Կարմիր ողնությունը և աշխատավորների մէառնա- կան ճակատը ընդդեմ պատերազմի և ֆաշիզմի . . .	22
Միջազգային կարմիր ողնության աշխատանքն առանձին յիրկըներում	31
Կարմիր ողնությունը ԶՀԿաստանում	37
Ի պաշտպանություն Հարեւանակի վրա կատարած Փաշիստական հարձակման դոհերի	44
Կարմիր ողնությունը և միջազգային հակասատե- րազմական որը	50
Բոլոր ուժերն ի պաշտպանություն Խորհրդային Միության	53



Պատ. խմբագիր՝ Ա. Շ ա հ ի ն յ ա ն
Տեխ. խմբագիր՝ Ի. Վ ա լ դ ա ն յ ա ն
Սըբագրիչ՝ Ա. Շ ա հ բ ա զ յ ա ն

Գլավլիսի լիուզոր Խ—9221 Պատվեր 855. Հրատ. 4131 Տիրաժ
3000. Թուղթ 72×105. Տպագր. 13/4. մ. Մեկ մամբւլում 51 200
Նիշ՝ 21/4մ. Հեղինակի մամ.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0040277

(124)

ԳԻՒԸ 75 ԿՈՐ.

487



Г. Грюнвальд

МОПР

в борьбе против войны

Гиз Арм. ССР, Ереван, 1937 г.